

2018թ. հոկտեմբերի 31-ին, N120  
ք.Աշտարակ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի «Հուսակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամ Մամիկոն Աբգարյանի 2018 թվականի օգոստոսի 20-ի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին» N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Թալինի տարածաշրջանի 23-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) «Հուսակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում «Աբգարյան Մամիկոն» բառերը փոխարինել «Կարապետյան Արթուր» բառերով:

Недействительная подпись

X 



VERIFIED OCSP 10/31/2018 12:29:02 GMT+4

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ